# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

## Տ Ն Օ Ր Ե Ն

Երևան-1, Նալբանդյան փ. 104

«18» 07 2015թ. № 2/1/2-739

ՀՀ արտաքին գործերի նախարար
պարոն
Է.Նալբանդյանին

Ի պատասխան Ձեր 1111/06813 առ 07.07.2015թ.

Հարգելի պարոն Նալբանդյան

Ուղարկում ենք «Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի կառավարության միջև սահմանային ներկայացուցիչների՝ սահմանային կոմիսարների գործունեության մասին» Համաձայնագրի կնքման նպատակահարմարության մասին տեղեկանքը, ինչպես նաև նշված Համաձայնագրի և Հավելվածների հայերեն թարգմանությունը:

Առդիր. ըստ տեքստի, 21 թերթ:

Հարգանքով՝

Գ.Հակոբյան

06351

Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարություն
17 JUL 2015

5013

<<Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի կառավարության միջև սահմանային ներկայացուցիչների՝ սահմանային կոմիսարների գործունեության մասին>> Համաձայնագրի կնքման նպատակահարմարության մասին

## Տեղեկանք

Համաձայնագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության և Վրաստանի սահմանային ներկայացուցիչների նշանակումը և նրանց գործունեության կարգի սահմանումը: Համաձայնագրի կնքումը նպատակահարմար է ելնելով Հայաստանի Հանրապետության և Վրաստանի սահմանային ներկայացուցիչների նշանակման և նրանց գործունեության կարգի սահմանման, փոխադարձ կանոնավոր կապի պահպանման, ինչպես նաև սահմանային միջադեպերը բացառելու, դրանք կարգավորելու, պետական սահմանում խախտումները կանխելու ու հետաքննելու՝ պետական սահմանի ռեժիմի ապահովման անհրաժեշտությունից:

ՀՀ ԱԱԾ ՍԶ Հրամանատար
գեներալ-մայոր Ա. Աբրահամյան

2196 ис